է։ Գաղթականութիւնը տեղաւորուել է լքեալ և հողառատ գիւղերում։ Երևանի, Ալեքսանդրապոլի, Դիլիջանի և Դարալագեազի շրջաններում սովեալներ չկան։ Կարսի և Սուրմալուի շրջանում կան միայն մասամբ։ Այժմ գլխաւոր ուշադրութիւն դարձուում է տարագիր հայութեան հաւաքման վրա։ Միջոցներ են ձեռք առնուած Հիւսիսային Կովկասում գտնուող գաղթականներին, որոնց թիւը հասնում է 70,000-ի, հայրենիք փոխադրելու։ Վրաստանը մի ժամանակ այդ խնդրում, ճիշտ է, արգելք էր հանդիսանում, բայց այժմ օժանդակում է մեզ։ Աշխատանք է հայթայթուում կարիքաւորներին, որոնք այժմ աշխատում են պետական արհեստանոցներում. այդպիսիների թիւը հասնում է ութ հազարի։ Ինամատարութեան գործը դրուում է նոր հիմունքների վրա։

Հանրային կրթութեան նախարարութիւն. — Բոլոր տարրական դպրոցների վարչութիւնը յանձնուել է քաղաքային և տեղավարական (զեմստուо) ինքնավարութիւններին, բացի Նոր-Բայազէտի, Կարսի և Սուրմալուի շրջաններից։ Ազգայնացումը, շատ ինչին բացառութեամբ, կատարուել է գրեթէ ամէն տեղ։ Զեռնարկուել է դասագրքերի հրատարակութեան, որի համար բացուել է խոշոր վարկ։ Համալսարանի համար յատկացուել է սեմինարի շէնքը։ Հրաւիրուել են և հրաւիրուում են պրոֆեսորներ և դասախօսներ։ Բացուել են պետական պաշտօնէութեան համար հայերէն դասընթացներ։ Համաձայնութիւն է կնքուում ամերիկացիների հետ որբերի կրթութեան գործը որոշակի ընդգծուած հիմունքների վրա դնելու նպատակով։ Բացուում են երաժշտական դպրոցներ Երևանում և Ալեքսանդրապոլում։

Արտաքին գործերի նախարարութիւն. — Մենք ստորագրել ենք Տաճկաստանին ներկայացուած հաշտութեան պայմանագիրը միւս պետութիւնների հետ միասին։ Մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, Տաճկաստանը պիտի ստորագրէր յուլիս 29-ին։ Դաշնագրով առաջարկուում է, որպէս իրաւարար Ամերիկայի նախագահ Վ. Վիլսընը, որն արդէն ընդունել է այդ կոչումը։ Նա իր գործին կանցնի, երբ Տաճկաստանը ստորագրի հաշտութեան պայմանները։

Մեր քաղաքական և տնտեսական պատուիրակութիւնները մեզ վստահեցնում են, որ ելքը մեզ համար նպաստաւոր կը լինի։ Հայաստանի այժմեան հողամասին կը կցուեն չորս վիլայէթներ՝ Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի և Էրզրումի։ Եթէ Տրապիզոն քաղաքը, որպէս նաւահանգիստ, մեզ չտրուի, անշուշտ մեզ կը տրուի ուրիշ ելք դէպի Սև ծովը։

Բաթումի խնդիրը մեզ համար մեծ նշանակութիւն ունի։ Բաթումը իր շրջանով վերջերս յանձնուեց Վրաստանին՝ պայմանով, որ ապահովի ազատ թրանզիտ Հայաստանի համար։ Մեզ համար կենսական նշանակութիւն ունի սեփական տերիտորիայով ելք ունենալ դէպի Բաթում։

Այժմ կայ երկու Տաճկաստան՝ մէկը Պոլսում, միւսը՝ յանձինս Մուստաֆա Քէմալի՝ Անդորայում, որին աջակցում է «Ազգային Մեծ ժողովը», և որի նախարարները, կոմունիստական Ռուսաստանի օրինակին հետևելով, կոչւում են կոմիսարներ։ Երբ մենք համաձայն տեղական ազգաբնակութեան ցանկութիւններին, գրաւեցինք Օլթին և այդ շրջանում ամրանալով՝ նախնախիչ հարուածներ հասցրինք տաճիկ զօրքերին, այն ժամանակ Բէքիր Սամին, Քէմալի Թիւրքիայի արտաքին գործոց «կոմիսարը», սկսեց բանակցել Հայաստանի կառավարութեան հետ՝ մեր զօրքերը այդ շրջանից յետ քաշելու շուրջ։ Նա, Բէքիր Սամին խօսում է Բրեստ-Լիտովսկի դաշինքի և Բաթումում ու Տրապիզոնում կնքուած հաշտութեան պայմանագրերի խախտման